

ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ.

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԻ ԵՐԵՎԱՆԸ

DOI: 10.52174/2579-2989_2022.2-127

Հիմնաբառեր. ուկրաինական իրադարձություններ, միջազգային իրավունք, ՄԱԿ-ի կանոնադրություն, միջազգային դատարաններ, ՀՀ անելիքներ

Միջազգային հարաբերությունների տեսության նեոռեալիզմի կամ նորդասական դպրոցի ներկայացուցիչների կարծիքով միջազգային հարաբերությունների համակարգը անարխիական է: Նորդասական տեսաբանները անարխիայի (անիշխանության) առկայությունը բացատրում են միջազգային հարաբերություններում ներպետական հարաբերություններին բնորոշ կարգ ու կանոն հաստատող սուբյեկտի բացակայությամբ: Սակայն, նույնիսկ անարխիայի համակարգում առկա են խաղի որոշակի կանոններ, որոնք էլ, համակարգի անարխիկ բնույթով պայմանավորված, հաճախ անտեսվում են, ինչն էլ վերստին ապացուցում է այն պնդումը, որ պայմանագրերը կենսունակ են այնքան ժամանակ, քանի դեռ գործում են դրանցում ամրագրված պայմանները: Հոդվածում ներկայացնում ենք միջազգային իրավական այն հիմնարար փաստաթղթերը, որոնք անտեսվել են ուկրաինական իրադարձությունների ժամանակ: Փաստերի վերհանմանն ու վերլուծմանը հաջորդում է առաջարկությունների համախումբ, որին, մեր համոզմամբ, պետք է հետևի պաշտոնական Երևանը՝ հարկապես բազմակողմ դիվանագիտության մեջ:

ՄԱԿ-ի կանոնադրություն, բանաձևեր և միջազգային սովորության իրավունք

Եթե հակիրճ, ապա միջազգային կարևորագույն և բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող փաստաթուղթը՝ ՄԱԿ-ի կանոնադրությունը, ուժի կիրառման իրավունք է տալիս երկու դեպքում՝ անհատական և կո-



Ալբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու,
ասիստենտ

2012 թ. ավարտել է ՀՊՏՀ բալավալրիաբար՝ տնտեսագիտության տեսություն մասնագիտության մասնագիտության մասնագիտության մագիստրոսի որակավորում՝ «Մեներջմենթ» մասնագիտությամբ, 2017 թ.՝ տնտեսագիտության թեկնածուի գիտական ասպիրանտ: 2018 թ.-ից դասավանդում է ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում: Հեղինակ է 12 գիտական հոդվածների:

 ORCID - <https://orcid.org/0000-0003-1029-3620>

լեկտիվ ինքնապաշտպանություն (հոդված 51), և եթե առկա է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի (ԱԽ) համաձայնությունը (հոդված 43-50): Ինչ վերաբերում է ինքնապաշտպանության իրավունքին, ապա այս առումով, հարկ է վկայակոչել «Նիկարագուան՝ ընդդեմ ԱՄՆ-ի» գործով ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ) վճիռը, որտեղ նշվում է, որ ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածով նախատեսված ինքնապաշտպանության իրավունքը գործում է միջազգային սովորույթային իրավունքի հետ միաժամանակ¹: Այս համատեքստում անդրադառնանք նաև միջազգային սովորույթային իրավունքին և մասնավորապես՝ նախադեպային դարձած «Քերոլայն» քեյսին (իրավիճակին): Կանադայի անկախության համար պայքարի ժամանակ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև բախումը, ըստ էության, շրջադարձային է եղել. սահմանվել են այն երեք չափանիշները, որոնց միաժամանակյա առկայության դեպքում միայն երկիրը կարող է վկայակոչել ինքնապաշտպանության իր իրավունքը: Այդ չափանիշներն են՝ վտանգի մոտալուտ լինելը (imminence of threat), ուժի կիրառման անհրաժեշտությունը (necessity to use force) և ուժի կիրառման համաչափությունը (proportionality): Այսինքն՝ ուժ կիրառող պետությունը պետք է ապացուցի մոտալուտ վտանգի սպառնալիքը, որն այլ միջոցներով, այդ թվում՝ դիվանագիտական, հնարավոր չէ չեզոքացնել: Բացի այդ, համաչափության սկզբունքը ենթադրում է, որ կիրառվելիք ուժը չպետք է լինի ավելին, քան անհրաժեշտ է մոտալուտ վտանգը չեզոքացնելու կամ ազդեցոր պետության գործողությունները խափանելու համար, այլ կերպ ասած, ինքնապաշտպանության իրավունքը պետք է լինի թույլատրելի սահմաններում:

Այս առումով, հարց է ծագում՝ արդյո՞ք միջազգային իրավունքի տեսանկյունից ուկրաինական իրադարձություններն ապո-

րինի են: Թեպետ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան (ԳԱ) ընդունեց A/RES/ES-11/1 բանաձևը, այդուհանդերձ, պետք է նշել, որ վերջինիս վճիռները պարտադիր իրավական ուժ չունեն: Պարտադիր իրավական ուժ ունեն միայն ՄԱԿ-ի ԱԽ-ի ընդունած որոշումները, որտեղ Ռուսաստանին վերապահված է վետոյի իրավունք: Այդ իրավունքը կարող է օգտագործվել նաև ՄԱԿ-ի կանոնադրության հնարավոր փոփոխության առաջարկը քննարկելիս, և ի հեճուկս Ուկրաինայի պահանջների², ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամին անդամակցությունից զրկելու որևէ կառուցակարգ կամ ընթացակարգ չկա: Իսկ հնարավոր է, արդյոք, շրջանցել ԱԽ-ն և ՄԱԿ-ի այլ մարմնի կազմում կամ ՄԱԿ-ից դուրս անվտանգային իրավական որոշումներ ընդունել:

1950 թ.-ին ՄԱԿ-ի ԳԱ-ն ընդունեց, մեր խորին համոզմամբ, միջազգային իրավունքի պատմության մեջ ամենաազդեցուն պատմական՝ «Միավորում՝ հանուն խաղաղության» (Uniting for Peace) բանաձևը: Դատելի ունեցավ կորեական պատերազմի համատեքստում՝ ԽՍՀՄ-ի վետոյի իրավունքը շրջանցելու նպատակով: Բանաձևը ՄԱԿ-ի ԳԱ-ին հնարավորություն է տալիս ԱԽ-ի անմիաբանության դեպքում հանդես գալու նաև ռազմական միջամտության առաջարկությամբ³: Շատ իրավաբաններ ու փորձագետներ պնդում են, որ այդպիսով ԳԱ-ն փորձել է հանիրավի յուրացնել (arrogate) ԱԽ-ի լիազորությունները, իսկ մեկ այլ խումբ էլ հրավիրում է ընթերցողի ուշադրությունը բանաձևում օգտագործված բառամթերքի և մասնավորապես՝ «recommend» (առաջարկել, խորհուրդ տալ) բառի վրա, որն ընդգծում է բանաձևի ոչ պարտադիր իրավական բնույթ ունենալը: ՄԱԿ-ի պատմության ընթացքում այս բանաձևի ընձեռած հնարավորություններից օգտվել են 11 անգամ, վերջինը՝ ի պատասխան ուկրաինական վերջին իրադարձությունների: Արդյուն-

¹ Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. United States of America), 1986, ICJ Rep. 14, paras 176 and 193.
² Resolution adopted by the General Assembly on 2 March 2022 [without reference to a Main Committee (A/ES-11/L.1 and A/ES-11/L.1/Add.1)] ES-11/1. Aggression against Ukraine available at <https://digitallibrary.un.org/record/3965290?ln=en#record-files-collapse-header>
³ United Nations General Assembly Resolution A/RES/377(V) 3 November 1950. Retrieved 2007-09-21. <https://www.un.org/en/>

քում, գումարվեց ՄԱԿ-ի ԳԱ-ի 11-րդ հրատապ նիստը (emergency session), որի ժամանակ էլ 141 կողմ, 5 դեմ, 35 ձեռնպահ (ներառյալ ՀՀ-ն)⁴ ձայներով ընդունվեց վերոգրյալ՝ A/RES/ES-11/1 բանաձևը: Կարող է ՄԱԿ-ի ԳԱ-ն, առանց ԱԽ-ի, ռազմական ինտերվենցիա (բռնի միջամտություն) կատարել: Ըստ ԱՄԴ 1962 թ. խորհրդատվական կարծիքի՝ ռազմական ուժով պարտադրանքը ՄԱԿ-ի ԱԽ-ի բացառիկ իրավասությունն է, սակայն ՄԱԿ-ի ԳԱ-ն ունի բավական լայն գործիքակազմ, այդ թվում՝ խաղաղապահ ուժերի տեղակայմանն առնչվող:

Հելսինկյան եզրափակիչ ակտ և Բուդապեշտյան հուշագիր

1975 թ. հուլիս-օգոստոսին՝ երեք տարվա խորհրդակցությունից հետո, Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում ընդունվեց «Եվրոպայում անվտանգության և համագործակցության համաժողովի» եզրափակիչ ակտը: Փաստաթուղթը ստորագրվել է 35 պետության ղեկավարների կողմից, այդ թվում՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և Եվրոպական (բացի Ալբանիայից և Անդորայից) երկրների: Այն նպատակ ուներ բարելավելու արևմտյան և Վարշավյան պայմանագրի երկրների միջև հարաբերությունները: Փաստաթուղթը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

1. ինքնիշխան իրավասություն, հարգանք ինքնիշխանության հատուկ իրավունքների հանդեպ,
2. ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում,
3. սահմանների անխախտելիություն,
4. պետությունների տարածքային ամբողջականություն,
5. վեճերի խաղաղ կարգավորում,
6. ներքին գործերին չմիջամտություն,
7. մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների (ներառյալ մտքի, խղճի, կրոնի կամ դավանանքի) նկատմամբ հարգանքի դրսևորում,
8. ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքներ,
9. պետությունների համագործակցություն,
10. միջազգային իրավունքով ստանձնած

պարտավորությունների բարեխիղճ կատարում⁵:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ պետք է նշել, որ ուկրաինական իրադարձություններն աննախադեպ են ՄԱԿ-ի ստեղծումից ի վեր: Քննադատները կարող են պնդել, որ օրինակ՝ ԱՄՆ-ի գործողություններն Իրաքում կամ Իսրայելի կանխարգելիչ հարվածները Սիրիայի կամ Իրաքի՝ սաղմնային փուլում գտնվող միջուկային զենքի ստեղծման օբյեկտներին նույնպես արտոնված չեն եղել ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից: Սակայն, ՄԱԿ-ի ստեղծումից ի վեր միայն մի դեպքում է պետությունը սպառնացել մեկ այլ պետության քաղաքական անկախությանն ու տարածքային ամբողջականությանը: Խոսքը Քուվեյթի վրա Իրաքի հարձակման մասին է, որն արժանացավ միջազգային հանրության վճռական դիմադրությանը: Եվ թեպետ տեղի ունեցած տարբեր ինտենսիվության մի շարք պատերազմներին, ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ էլ որևէ այլ երկիր երբևէ չի փորձել սպառնալ մեկ այլ պետության տարածքային ամբողջականությանը կամ էլ քաղաքական անկախությանը՝ այն մասամբ կամ ամբողջությամբ բռնակցելով կամ բռնակցել փորձելով: Այլ կերպ ասած, որևէ պետություն երբևէ չի ճանաչել նախկինում իր կողմից երբևէ չվիճարկված տարածք՝ որպես իր անքակտելի մի մասնիկը: Միաժամանակ, ՄԱԿ-ի ստեղծումից ի վեր, առանց պետության համաձայնության իրենից անջատված մասի կողմից հռչակված անկախության միջազգային ճանաչման և դրան հետևած ՄԱԿ-ի լիիրավ անդամակցության միայն մեկ դեպք է հայտնի: Խոսքը Բանգլադեշի մասին է, որի անկախությունը Պակիստանը չէր ճանաչում՝ մինչև վերջինիս ՄԱԿ-ի անդամ դառնալը: Ընդգծենք նաև, որ ԱՄՆ-ը չի ստորագրել որևէ փաստաթուղթ, որտեղ նշվում է, որ ինքը, օրինակ՝ Իրաքի կամ նախկին Հարավսլավիայի անվտանգության երաշխավորն է: Մինչդեռ ՌԴ-ն 1994 թ.-ին ստորագրված բուդապեշտյան հուշագրով, ԱՄՆ-ի և Միացյալ Թագավորության հետ մեկտեղ, ստանձնել է պարտավորություն՝

⁴ ՄԱԿ-ի անդամ 12 երկիր չի մասնակցել քվեարկությանը:

⁵ Տես ՀՀ ԱԳՆ և ԵԱՀԿ, Հելսինկի, 1975-2005, <https://www.osce.org/files/f/documents/e/0/39507.pdf>

հարգելու Ուկրաինայի քաղաքական անկախությունը, սահմանների անձեռնմխելիությունն ու տարածքային ամբողջականությունը: ՄԱԿ-ի ԱԽ մշտական անդամ նշյալ երեք երկրները նաև պարտավորվել են Ուկրաինայի դեմ միջուկային որևէ տերության հարձակման դեպքում ՄԱԿ-ի ԱԽ-ին վերապահված գործիքակազմով աջակցել վերջինիս:

Միջազգային իրավունքի շրջանակում փարաձայնությունների կարգավորման կառուցակարգերը

Միջազգային իրավունքի շրջանակում ներկայում հասանելի գործիքակազմը Ուկրաինային ու Ռուսաստանին հնարավորություն էր տալիս իրենց վեճերը լուծելու խաղաղ ճանապարհով: Մասնավորապես՝ յուրաքանչյուր հարց կարող էր քննարկվել ԱՄԴ-ում, ինչպես նաև Հաագայի Արբիտրաժի մշտական դատարանում: Հավելենք, որ և՛ Ուկրաինան, և՛ Ռուսաստանը ստորագրել են Արբիտրաժի մշտական դատարանի երկու հիմնարար համաձայնագրերը⁶: Ավելին, վերջիններս վավերացրել են նաև ԵԱՀԿ հաշտության և արբիտրաժի 1992 թ.-ի ստոկհոլմյան համաձայնագիրը⁷ և իրենց տարաձայնությունները կարող էին քննարկել ԵԱՀԿ հովանու ներքո գործող արբիտրաժային դատարանում: Հավելենք, որ տարեկան 95.000 շվեյցարական ֆրանկ բյուջե ունեցող ԵԱՀԿ արբիտրաժային դատարանն իր ստեղծման օրվանից դեռ որևէ գործ չի քննել⁸: Եվ հարց է առաջանում՝ ինչո՞ւ նշյալ երկրների միջև առկա տարաձայնությունները սովյալ դատական ատյաններից և ոչ մեկում չի լսվել: Իրականությունն այն է, որ, ի տարբերություն ներպետական դատական ատյանների, միջազգային դատարան դիմելիս, որպես կանոն, անհրաժեշտ է տարաձայնություններ ունեցող բոլոր կողմերի համաձայ-

նությունը: Մասնավորապես՝ ԱՄԴ դիմելու համար պետք է վեճի կողմ հանդիսացող բոլոր կողմերի համաձայնությունը, որը կարող է արտահայտվել երեք ձևով. 1. վեճի կողմ պետությունները կնքում են համաձայնագիր, ըստ որի՝ վեճի լուծումը վերապահվում է ԱՄԴ-ին (հայտնի է որպես *compromis*), 2. համաձայնությունը նախատեսվում է միջազգային պայմանագրով (օրինակ՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թ.-ին ընդունված համաձայնագրի 30-րդ հոդվածը⁹), 3. պետությունն ԱՄԴ կանոնադրության 36-րդ հոդվածի հատկանիշներով հայտարարում է, որ ճանաչում է նման պարտավորություն ընդունած յուրաքանչյուր այլ պետության նկատմամբ դատարանի իրավազորությունը բոլոր իրավական հարցերում, որոնք վերաբերում են. ա) պայմանագրի մեկնաբանմանը, բ) միջազգային իրավունքի ամեն մի հարցի, գ) փաստի առկայությանը, որը եթե հաստատվի, հանդես կգա որպես միջազգային պարտավորության խախտում, դ) միջազգային պարտավորության խախտման համար փոխհատուցման բնույթին և չափերին: Հայտարարությունները կարող են լինել առանց պայմանի կամ փոխադարձության հիման վրա՝ այս կամ այն պետության կողմից կամ էլ որոշակի ժամկետով¹⁰: Հարկ ենք համարում առանձնահատուկ կերպով ընդգծել, որ Ռուսաստանն ու Ուկրաինան ձեռնպահ են մնացել ԱՄԴ կանոնադրության 36-րդ հոդվածով նախատեսված հայտարարությունն անելուց: Նմանապես, Արբիտրաժի մշտական դատարանը և ԵԱՀԿ հովանու ներքո գործող արբիտրաժային դատարանը գործը կարող են լսել միայն երկու կողմի՝ սովյալ պարագայում Ռուսաստանի և Ուկրաինայի համաձայնության դեպքում: Իրավամբ, հավելյալ հետազոտություն-

⁶ Permanent Court of Arbitration, Contracting Parties The PCA has 122 Contracting Parties which have acceded to one or both of the PCA's founding conventions. <https://pca-cpa.org/en/about/introduction/contracting-parties/>
⁷ OSCE, List showing signatures and ratifications or accessions with respect to the Convention on Conciliation and Arbitration within the OSCE, January, 2020, available at https://www.osce.org/files/f/documents/8/2/40119_2.pdf
⁸ OSCE, Court of Conciliation and Arbitration, Key resources, Thumbnail cover of the "Factsheet: Court of Conciliation and Arbitration"
⁹ ODCHR, Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 10 December 1984 entry into force 26 June 1987, Article 30(1), available at <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/cat.aspx>
¹⁰ ICJ, Statute of the International Court of Justice, Article 36, available at <https://www.icj-cij.org/en/statute>

ների արդյունքում կարելի է վկայակոչել իրավական ուժ ունեցող բազմաթիվ այլ միջազգային փաստաթղթեր, որոնց տառին և ոգուն համահունչ չեն ուկրաինական վերջին իրադարձությունները: Սակայն, մենք դա անկարևոր ենք համարում, քանի որ, հիմնարար և կարևորագույն փաստաթղթերի առանցքային դրույթների խախտումները մատնանշելով, կարծում ենք, որ ուկրաինական իրադարձությունների՝ միջազգային իրավունքի տեսանկյունից չհիմնավորված լինելը վերջարարյալ տեքստում բավարար չափով պատճառաբանված է: Այսքանով հանդերձ, նամանավանդ Ադրբեջանի հետ խաղաղության հնարավոր պայմանագրի ստորագրման, Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ բազմապիսի պաշտոնական հայտարարությունների խորապատկերում հարց է առաջանում՝ ինչ պետք է անի ՀՀ-ն, եթե անգամ իր արևելյան և արևմտյան հարևանների հետ հարաբերությունների կարգավորումից հետո ռազմական ագրեսիայի զրոյ դառնա: Չէ որ ուկրաինական իրադարձությունները էապես արժեզրկել են միջազգային իրավունքի՝ առանց այդ էլ փխրուն գործիքակազմը՝ նվազեցնելով, իսկ գուցե նաև զրոյացնելով վերջինիս կարևորության նկատմամբ աշխարհի ժողովուրդների ունեցած հավատը: Փորձենք պատասխանել այդ հարցին:

Ինչ պետք է անի Հայաստանը

Ինչպես արդեն նշեցինք, միջազգային հարաբերությունների համակարգը անարխիկ է: Սակայն, դա չի նշանակում, որ այստեղ գործում են «ջունգլիի օրենքները», երբ յուրաքանչյուրը պատասխանատու է ինքն իր համար և «ուժեղը որսում և կուլ է տալիս թույլին»: Կան «խաղի կանոններ», որոնք, թեպետ, ոչ հաճախ և հիմնականում հզոր տերությունների կողմից խախտվում էին, սակայն առավելապես գործում էին և ձևական բնույթ չէին կրում: Եվ այդ «խաղի կանոններին», իմա՝ միջազգային իրավունքի դրույթներին հետևողական լինելը,

առաջին հերթին, բխում է հենց ՀՀ-ի պես փոքր պետությունների շահերից, քանի որ վերջիններիս ինքնապաշտպանվելու հնարավորությունները, ի տարբերություն օրինակ՝ ՌԴ-ի կամ ԱՄՆ-ի, անհամեմատ ավելի սահմանափակ են: Միաժամանակ, որպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ջատագով երկիր՝, ՀՀ-ն պետք է միջազգային հանրության ուշադրությունը բևեռի այն հանգամանքի վրա, որ ՄԱԿ-ի ստեղծումից ի վեր տեղի ունեցած պատերազմների ճնշող մեծամասնության ժամանակ, իբրև մեկ կողմի գործողությունների լեգիտիմացում, հաճախակի վկայակոչվել է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրացումը կամ այդ իրավունքի պաշտպանությունն արտասահմանյան պետության կողմից: Այս առումով, պետք է նշել, որ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ երկու անգամ հանդիպող «ժողովուրդների ինքնորոշման իրավունք» հասկացությունը զուրկ է իրավական որոշակիությունից, ինչից էլ օգտվում են բազմաթիվ երկրներ՝ կամայականորեն մեկնաբանելով նշյալ դրույթը և այն որպես «շղարշ» օգտագործելով սեփական գործողությունների արդարացման ու լեգիտիմացման համար: Բացառություն չեն նաև ուկրաինական վերջին իրադարձությունները: Ուստի, ելնելով Արցախը հայկական պահպանելու՝ հայ ժողովրդի համազգային իղձերից և ՀՀ պետական շահերից, պատկան մարմիններին առաջարկում ենք հետևյալը.

1. Ժողովուրդների ինքնորոշման իրավունքին իրավական որոշակիություն հաղորդելու շուրջ ներպետական քննարկումների կազմակերպում՝ ակադեմիական ոլորտի ներկայացուցիչների և փորձագետների ներգրավմամբ,
2. քննարկման արդյունքում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի որոշակիացման մոդելների մշակում,
3. Ժողովուրդների ինքնորոշման իրավունքին իրավական որոշակիություն հաղորդելու մեջ շահագրգիռ այլ պետությունների հետ խորհրդակցություն-

¹¹ Թեպետ հայ իրականությունում հաճախ օգտագործվում է «ազգերի ինքնորոշում» եզրույթը, սակայն առավել նախընտրելի է կիրառել այն բառապաշարը, որը հատուկ է ՄԱԿ-ի կանոնադրությանը (self-determination of peoples, ՄԱԿ-ի կանոնադրություն, հոդված 1, կետ 2), <https://www.un.org/en/about-us/un-charter/full-text>

Альберт АЙРАПЕТЯН*Старший исследователь исследовательского центра «Амберд»,
Ассистент кафедры международных экономических отношений, АГЭУ,
кандидат экономических наук***УКРАИНСКИЕ СОБЫТИЯ В СВЕТЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА: ЧТО ДЕЛАТЬ ЕРЕВАНУ?**

По мнению представителей теории неореализма международных отношений, или неоклассической школы, система международных отношений анархична. Теоретики-неоклассики объясняют существование анархии отсутствием в международных отношениях субъекта, устанавливающего типичный для внутренних отношений порядок. Однако даже в анархической системе существуют определенные правила игры, которые часто игнорируются из-за анархического характера системы, что еще раз доказывает утверждение о жизнеспособности договоров до тех пор, пока существуют условия, создаваемые этими договорами. В данной статье представлены основные международно-правовые документы, которые были проигнорированы во время событий на Украине. За изложением и анализом фактов последует ряд предложений, которым, на наш взгляд, должен следовать официальный Ереван, особенно в многосторонней дипломатии.

Ключевые слова: *события на Украине, международное право, Устав ООН, международные суды, действия РА*

Albert HAYRAPETYAN*Senior Researcher of «Amberd» Research Center,
PhD in Economics, Assistant Professor
in the Chair of International Economics, ASUE***EVENTS IN UKRAINE IN THE LIGHT OF INTERNATIONAL LAW: WHAT SHOULD YEREVAN DO?**

According to the representatives of the neorealism of the theory of international relations the system of international relations is anarchic. Neo-realist theorists explain the existence of anarchy by the lack of a subject that establishes the order typical of domestic relations in international relations. However, even in an anarchic system there are certain rules of the game which are often ignored due to the anarchic nature of the system, which again proves the assertion that contracts are viable as long as the prerequisites thereof persist. In the present paper, we will present the basic international legal documents that were ignored during the events in Ukraine. The presentation and the analysis of the facts will be followed by a set of proposals, which, we believe, should be followed by the Government of Armenia, especially in multilateral diplomacy.

Key words: *Ukrainian events, international law, UN Charter, international courts, what to do in Armenia*